ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 50-Ա

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի «ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ և 70-րդ հոդվածներով՝ Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է.

1. Վանաձորի համայնքի ավագանու 2013թ. հոկտեմբերի 09-ի ‹‹Վանաձորի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարկան բյուջեի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին›› թիվ 76-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   ա. «Գ.Բաղյան – Վանաձորի համայնքի ավագանու անդամ» տողը փոխարինել
   «Գ.Բաղյան – մշակույթի և կրթության բաժնի պետ» տողով, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝
   «Կ.Պառավյան - Վանաձորի համայնքի ավագանու անդամ».
   բ. «Հր. Նազարյան – քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնի պետ» տողը փոխարինել
   «Հր. Նազարյան - քաղաքապետի օգնական» տողով, լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝
   «Է.Հովսեփյան - քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնի պետ».
   գ. «Ս. Մարտիրոսյան – իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ» տողը փոխարինել «Մ. Գալստյան – իրավաբանական բաժնի պետ» տողով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

| ԿՈՂՄ (11) | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|
| Գ.Քալանթարյան | Գ.Շահինյան | ______ |
| Ս.Աղաբեկյան | Ա.Հարությունյան | |
| Ա.Խաչատրյան | Դ.Սիմոնյան | |
| Կ.Պառավյան | Վ.Դավիթավյան | |
| Ա.Գրիգորյան | Ա.Օհանյան | |
| Վ.Դոխոյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 51-Ա

## ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՋԵՌՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՍՏԻՔՆԵՐ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնքային միջոցների խնայողության տեսակետից Վանաձորի քաղաքապետարանի շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպումը ժամանակավորապես հնոցապաններ ընդունելու միջոցով առավել նպատակահարմար է, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Վանաձորի համայնքի ավագանին

## Ո Ր Ո Շ Ու Մ   Է.

Տալ համաձայնություն Վանաձորի քաղաքապետարանի շենքի ջեռուցման աշխատանքների կազմակերպման համար նախատեսելուն ջեռուցման համակարգի օպերատորի երեք հաստիք՝ 77220 (յոթանասունյոթ հազար երկու հարյուր քսան) ՀՀ դրամ աշխատավարձի չափով և ջեռուցման համակարգի օպերատոր-կաթսայատան շահագործման և անվտանգության պատասխանատուի մեկ հաստիք՝ 81230 (ութսունմեկ հազար երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ աշխատավարձի չափով 2014թ. նոյեմբերի 1-ից մինչև 2015թ. մարտի 31-ը ժամանակահատվածի համար:

| ԿՈՂՄ (11) | ԴԵՄ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|
| Գ.Քալանթարյան | Գ.Շահինյան | ___ |
| Ս.Աղաբեկյան | Ա.Հարությունյան | |
| Ա.Խաչատրյան | Դ.Սիմոնյան | |
| Կ.Պառավյան | Վ.Դավիթավյան | |
| Ա.Գրիգորյան | Ա.Օհանյան | |
| Վ.Դոխոյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 52-Ա

## ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի նոտարական տարածքի նոտար Մամիկոն Ասլանյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ու Մ Է.

1. Տիգրան Մեծի պող. թիվ 22 hասցեի քաղաքապետարանի շենքի առաջին հարկի 35.15քմ մակերեսով տարածքը, որից 7.95քմ՝ ընդհանուր օգտագործման տարածք, համաձայն հավելվածի, 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության հանձնել նույն տարածքի վարձակալ Մամիկոն Ասլանյանին, որպես աշխատանքային գրասենյակ օգտագործելու համար:

2. Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում Մամիկոն Ասլանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

| ԿՈՂՄ( 11 ) | ԴԵՄ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|
| Գ.Քալանթարյան | Գ.Շահինյան | |
| Ս.Աղաբեկյան | Ա.Հարությունյան | |
| Ա.Խաչատրյան | Դ.Սիմոնյան | |
| Կ.Պառավյան | Վ.Դավիթավյան | |
| Ա.Գրիգորյան | Ա.Օհանյան | |
| Վ.Դոխոյան | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 53-Ա

## ԱՆԺԵԼԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձորի նոտարական տարածքի նոտար Անժելա Կիրակոսյանի դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Տիգրան Մեծի պող. թիվ 22 հասցեի քաղաքապետարանի շենքի առաջին հարկի 18.75քմ մակերեսով տարածքը, որից 7.95քմ՝ ընդհանուր օգտագործման տարածք, համաձայն հավելվածի, 5 տարի ժամկետով վարձակալության հանձնել նույն տարածքի վարձակալ Անժելա Կիրակոսյանին, որպես աշխատանքային գրասենյակ օգտագործելու համար:

2. Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարին՝ մեկամյա ժամկետում Անժելա Կիրակոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

ԿՈՂՄ( 11 ) ԴԵՄ( 0 ) ՁԵՌՆՊԱՀ(0 )

Գ.Քալանթարյան Գ.Շահինյան ____ ____

Ս.Աղաբեկյան Ա.Հարությունյան

Ա.Խաչատրյան Դ.Սիմոնյան

Կ.Պառավյան Վ.Դավիթավյան

Ա.Գրիգորյան Ա.Օհանյան

Վ.Դոխոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 54-Ա

## «ՀԱՐԻՆԳ» ՍՊԸ-ԻՆ
## ՏԱՐԱԾՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հարինգ» ՍՊԸ-ի տնօրենի գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և Վանաձորի համայնքի ավագանու 2013թվականի նոյեմբերի 15-ի թիվ 99-Ն որոշմամբ՝

Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Տիգրան Մեծի պողոտայի թիվ 22 հասցեում գտնվող քաղաքապետարանի շենքի առաջին հարկի բացվածքից՝ 193.6քմ մակերեսով տարածք, համաձայն հավելվածի, 5 տարի ժամկետով վարձակալության հանձնել «Հարինգ» ՍՊԸ-ին՝ որպես գրասենյակ օգտագործելու համար:

2. Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում «Հարինգ» ՍՊԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր:

| ԿՈՂՄ(11) | | ԴԵՄ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Գ.Քալանթարյան | Գ.Շահինյան | ___ | ___ |
| Ս.Աղաբեկյան | Ա.Հարությունյան | | |
| Ա.Խաչատրյան | Դ.Սիմոնյան | | |
| Կ.Պառավյան | Վ.Դավիթավյան | | |
| Ա.Գրիգորյան | Ա.Օհանյան | | |
| Վ.Դոխոյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2014 թվականի N 55-Ա

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի «ՎԱՀԱԳՆ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 94-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով՝
Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Վանաձորի համայնքի ավագանու 2013թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 94-Ա որոշման 2-րդ կետից հանել «մեկամյա ժամկետում» բառակապակցությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունմանը հաջորդող օրվանից:

| ԿՈՂՄ( 11 ) | | ԴԵՄ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ(0 ) |
|---|---|---|---|
| Գ.Քալանթարյան | Գ.Շահինյան | —— | —— |
| Ս.Աղաբեկյան | Ա.Հարությունյան | | |
| Ա.Խաչատրյան | Դ.Սիմոնյան | | |
| Կ.Պառավյան | Վ.Դավիթավյան | | |
| Ա.Գրիգորյան | Ա.Օհանյան | | |
| Վ.Դոխոյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԴԱՐԲԻՆՅԱՆ

2014 թ. հոկտեմբերի 16
ք.Վանաձոր